

թէ իր պատմածները «բազում ի գեղջկաց
գրուցին մինչև ցայժմ», այսինքն մինչև
իր պատմելու օրը: Ի՞նչ ազգից էին այն
գեղջուկները, որ պատմում էին այդ զր-
բոյցները, ո՞ր էր տեսել ու լսել նրանց:
Յունաստանում թէ այլուր: Երբ Ոլիմպիո-
զորոն ասում է թէ՝ ձեզ պիտի պատմեմ
անպիլր գրոյցներ «յաւանդութենէ ի մեզ
հասնալ», ովքե՞ր են այդ «մեզ» ասածը,
որոնցից մէկը համարում է իրան: Վերջա-
պէս ի՞նչ ազգի զաւակ է Ոլիմպիոզորոսն
ինքը: Զրոյցները պատմում են Յունաս-
տանի մէկում, զուցէ Աթէնքում, ուր մեր
երեք հայերը զնացել էին «իմաստութիւն
վարժելու»: Հաւանօրէն Ոլիմպիոզորոսին
լսում են յոյն իմաստուններ և հմուտներ:
Ասում են հաւանքէ՛ն, որովհետև որչապէս
պնդելու համար բաւարար հիմքեր չկան
Քորինացու հազորդածին մէջ: Որ լը-
սողներից երեքը հայ են եղած, այս մա-
սին տարակոյս չկայ, բայց թէ ի՞նչ ազ-
գից էին միւս խօսողներն ու լսողները և
ինչ լեզուով էին խօսում: զժուար է ասել:
Հաւանական է որ Յունաստանի ուսում-
նական կեդրոններից մէկի մէջ պատմուած
այս գրոյցները լսում էին Նաև կամ Բէ-
ռա՞նք յոյն իմաստուններ և հմուտներ և
հետևապէս խօսակցութիւնը յաւանքէ՛ն էր:
Արդ՝ այս ուսեալ ունկնդիրները որ աշ-
խարհագրութեան և ազգերի բաժանման
մասին շատ մատենների գրոյցներ գիտէին,
որ միեւնոյն գրոյցի տարբերակները գի-
տէին և կարող էին աշխարհական մեկնու-
թիւն տալ պատմածին, տալիս են Բէռա՞ն-
ք գրոյցս մատենից: Մինչդեռ Ոլիմպիոզոր-
ոսը, որ անկասկած նրանցից պակաս հը-

մուտ չէր, քանի որ «կատարելագոյն էր»
նրանց մէջ, Բէռա՞ն է, որ պատմում է
Նաև անպիլր գրոյցներ, աւանդաբար իրան
հասած, գրոյցներ, որ հայ ժողովուրդի
երգերի նիւթն են, որ «հինքն Արամազ-
նեայց» երգում էին «յաճախագոյն ի նը-
ւագս փանդան»: Կրկնում են. ո՞ր և ո՞ր
ազգի գեղջուկներից էր լսած այդ գրոյց-
ները: Յունաստանում և յոյն գեղջուկնե-
րից: Չեմ կարծում: Յոյն ժողովուրդն ի՞նչ
գործ ունէր Սիմ լերան, Տօրօն զաւառի
և Սրօնք զիւղի հետ, որ նրանց մասին
երգ կապէր. «յաճախագոյն» երգէր և ա-
ւանդաբար, իր գրոյց, հասցնէր մինչև
Ոլիմպիոզորոսի օրերը: Պէտք է ենթադրել
ուրեմն, որ Ոլիմպիոզորոս կամ հայ էր,
բայց յոյն անունով, որ հաստատուած էր
Յունաստանի մտաւորական կեդրոններից
մէկում: Կամ՝ եթէ յոյն էր և կամ ասորի՝
ապա ծնած ու ապրած էր Հայաստանում
կամ առնուազն Փոքր Ասիայի կամ Ասո-
րիքի հայաշատ մի շրջանում, ուր ասիթ
էր ունեցած իր պատմած գրոյցները լսելու
Հայերից, այսինքն այդ նոյն գրոյցների
մասին երգեր կապող ժողովուրդի բերանից:
Իր խօսքը թէ՛ իր պատմելիք գրոյցները
«յաւանդութենէ» հասած են «Է Բէռա՞ն», — ցոյց
է տալիս որ նա այն ժողովուրդի մէջ է
ապրած կամ զուցէ ո՞յն ժողովուրդի զա-
ւակն է, որ կարող էր այդ գրոյցներ ա-
ւանդաբար հասցնել նրան: Եւ զուցէ ե-
րեք ունկնդիր Հայերից մէկի զնահատու-
թիւնը, թէ Ոլիմպիոզորոս խօսակիցների
մէջ, «կատարելագոյն էր» ազգասիրա-
կան խանդի մի արտայայտութիւն է . . .
(Շարունակելի) Ն. ԱՂԱԲԱՆ

ՆՇԽԱՐՔ ՆԱԽՆԵԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ

Ա. Ե. ՓՐԵՄԻ ԱՍՈՐԻՈՅ

ՎԵՇՏԱՍԱՆ ԱՍԱՑՈՒԱԾԻ ՎԱՍՆ ՆԻԿՈՍԻԴԵԱՅ ԲԱՂԱՔԻՆ

ՀԵՆՐԵՐՈՐԴ ՎԱՍՆ ՆԻԿՈՍԻԴԵԱՅ (*)

(Շար. ՍԻՆ ԹԻՒ 1266)

Եկայք խափանեցուք խնդրեցուք

(*) Վերնագիրը կարմրադեղով գրեալ: Այսպէս
եւ ի ներքոյ ամենայն վերնագիրը:

չոգորմ, զի մի՛ խափանեցէ բարկութիւն
յանկարծ, որպէս խափանեաց զսոցմա-
ցիան, որ ոչ խափանեցան խնդրել զոգոր-
մութիւն: Խափանեաց սակաւ մի առ տու-

աւդն, զի յաճախեցին քեզ պարզեք նորա: Զի տաէ միշտ այնմ որ կարգայ, և տայ, յաճախէ՛ այնմ որ յամէ: Զայս խափանութիւն եզրարք, մի՛ համարիք խափանութիւն: Զի իբրեւ յերկրի խափանութիւն է, զա՛նձ զնէ մեզ ի բարձունս: Յայնժամ խափանեալ էաք, մինչ յաշխատութեան հեղձեալ էաք: Այժմ եղեաք սատար անձին, զի եկաք ի զո՛րժ պահոց: Պահոց սիրով, կարէ՛ ոք պատահել ըզմութեանս պարտեաց: Այս սակաւ խափանութիւն, պարի՛սպ է խափանութեան: Եկայք խափանեցուք զսակաւս, զի զուցէ խափանիցի՛մք իբրեւ զայն որ խափանեցանն: Եւ նոքա զի ոչ խափանեցան սակաւ, ահա խափանեցան յաւիտենից: Մի հոգացուք վասն խափանման, զի և ի հոգն զո՛րժ է երկրորդ: Բայց խափանեցուք յերկրոցն, ի զորժո՛ցն և ի հոգոց նորա: Զի եթէ խափան է զորժ, և չիցէ խափանեալ հոգ նորա, ի զորժն է տակաւին սիրտ մեր: Մշա՛կ են տակաւին միաք մեր: Քաջ լաւ է այնմ որ զորժէ, քան այնմ որ խափանի և տրտնջէ: Զի լաւ է նմա վաստակն, քան զարտունջն սպանող: Կտրեան երբայցիքն յանապատին, զի տրտնջեցին իբրեւ զխափանեալս: Մի արտնջեր ո՛ր որ խափանիսդ, զի մի՛ լիցիս սատար մեզայ: Տես զի այս խափանութիւն, աւրհնէ՛ յաճախ զարմայն քո: Զի փոխանակ արմտեաց քոց, է՛ այս խափանութիւն գեղեցիկ: Որպէ՛սզի հակառակ արմտեաց քոց, է՛ ժրտութիւն ազահ: Փոխանակ շինածի քո պահես, զի եղիցիս բնակիչ ի մէջ նորա: Զիա՛րդ է խափանեալ է շինուածն քո, զի ահա փոխանակ նորա վաստակիս: Եւ եթէ տեսցէ բարձրեալն⁽¹⁾ զի խափանեցար, աւգնէ՛ և նա ի զորժն քո: Կարէ հատուցանել զժրանայն, զի առ սէ՛ր նորա խափանեալ է ժրանայն քո: Կարէ հատուցանել քեզ ըզխափանութիւն, զի լաւ է քեզ զորժ քան զնա: Ընտրեաց զխափանութիւն որ աւգուտ է քեզ, քան զըզպատակն որ վնաս է քեզ: Ամենա՛յն հնարիւք մարթի խափանել, յառողջութեան և ի հիւանդութեան: Իբրեւ տանջիցիս յառողջութեան, իբրեւ աղքատացիս: Թերեւ տրտում ի-

ցեն շինուղք, զի խափանեցան շինուածք իւրեանց: Վասն առաջին տանցն խընդրեցեն, զի մի՛ եղիցին նոքա գերեզմանք: Թերեւ տրտնջիցեն մշակք, թէ ի գերեւելին կութք և հնձանք: Վասն հրեոցն ազաթա արացեն, զի մի՛ կորիցէ ընդ ըմպողս իւր: Ժիր կանայք ընդ ազաթից հոգան, զի խափանեցան սատայնք իւրեանց: Ազաչեն, զի զուցէ՛ յանկարծ թաղիցին այնիւ զոր զգեցեալն են: Յանձինս մեր չեմք վստահ, զի արարո՛ց ի հոգ մտեալ եմք: Ահա բարկութիւն քանդեաց ըզքաղաքս, և մեր խորհուրդքս ի կառն կան: Թերեւ հասեալ է զատաճիւր մեր, և ահա արածի՛ սիրտ մեր ի միսիւր: Խի՛ն փայլատակունք⁽¹⁾, ալրեցին քանդեցին, և այս մեզ իբրեւ զխա՛ղ թուի: Կէն արարածոց չիք ի միջի, և մեք ընդ միոյ երկո՛ւս ծայրհեալ եմք: Ընթացաւ⁽²⁾ աւազ և ծածկեաց զքաղաքս, և զմեզ ծածկեալս փոշի և կիր: Լերինք սողեցան ի տեղեաց իւրեանց, և մեք սողեցուք ի մեղաց մերոց: Էջ լեռուն ի տեղեոջէ իւրմէ, և ո՛չ էջ սիրտ մեր յանաւրէնութենէ: Դիմեաց ծով և ել ի ցամաք, զի զիմեաց դարս մեր յանաւրէնութիւն: Անց ծով ըստ սահման իւր, զի ա՛նց դարս մեր ըստ սահման իւր: Նոյ վաստակէր ի տապանն, և որդիք դարուն իւրոյ ի մէջս: Նա դատապանն այնդէր, և նոքա գլխամառութիւն: Նա ջանայր ի յարկան շինել, և որդիք դարուն իւրոյ ի ստացուածսն: Նա պատրաստեաց իւր ապաւինութիւն, և նոքա իւրեանց խորխորատ: Զի իբրեւ բացան աղբււրքն, եղեն պահանջո՛ղք անաւրէնութեանց: Հեղձուցին ջուրքն զազահս, որ հեղձեալ էին ի ստացուածս: Երա՛ց զդրունս իւր տապանն, որ ջանացաւ ի զորժ նորա: Եկեա՛ց փայտինն նկարիչ աւրինակաց: Հեղձուցին ջուրքն զընտանքսն: Որչափ ապարանեցին զտապանաւն, ետո՛ւն երանի տապանի նորա: Աւտարացան ի փրկութենէ նորա, զի աւտարացան ի կազմութենէ նորա: Նոյ ի մայրից կազմեաց դուռն ապաւինի իւրոյ և իւրոցն, իսկ մեզ եղիցին այսաւր խորդք և պահք փոխանակ մայ-

(1) Յաղնակին գեղալ էր՝ փայլատունք, զոր ուղղէ սրբազրիցն զնեղալ աղի ի վերայ ռոգին:

(2) Օրինակն ունէր՝ ընթաց, ուղղիցն յաւելու՝ աւ:

(1) Նախ գրեալ՝ եալն, ապա սրբազրիցն յաւելու ի վերայ ռոգին՝ բարձր:

րիցն: Գործեսցուք ի նոցանէն տապան, յաւդեսցուք ի նոցանէն արկեղս, զի ի նմա՝ ծածկին անձինք մեր ի բարկութենէն որ զիմեաց յամս մեր: Մի՛ արհամարհեսցուք զպատուիրանն իբրեւ զգարսն որ յաւուրսն նոյի, և արհամարհեսցուք ըզպահան քարոզեալս, իբրեւ զգործ տապանին: Զի թէ ծուլասցուք յապաշխարութեան, ինքն ապաշխարութիւնն կատարի՝ ի սակաւուց որ դառնան առ նա: Զի նոքա որ վաստակեցին, և կեցցեմն նոյաւ: Առնի իւրոցն ապաւինութիւն, և որոց չեն նորա կշտամբութիւն: Զի իբրեւ իւրքըն վաստակէին ի նմա, որ չէին նորա արհամարհէին: Նախ քան զմամկեան⁽¹⁾, վախճան ի վերայ դարուն որ յաւուրսն նոյի: Փոխանակ զի եկեսցեն յապաշխարութիւն, ամենայն որ ի գործ իւր ընթանայր: Զի ոչ ընթացան նոքա առ պահս, ընթացաւ հեղեղ ի վերայ նոցա: Զամենայն որ ի գործս իւր ըմպանեաց⁽²⁾, ի ի գործ իւր ո՛չ յաղաւթս: Բղխեցին ջուրք ընդ գործանաւք, յորդեցին ջուրք ընդ մշակաւք: Հոսեցան վտակք զլինուածովք, ի վերայ շինուածոց և շինողաց: Կուսեցան այլք ի մէջ սննեկաց: Զբաղոծեցան⁽³⁾ հարսունք յառազոստս: Բղխեցին աղբերք ի սրահս: Գոչեաց ծով յանդատանս: Որ ի խորոցն ի բարձր փախէր, հասնէր բարձանց պատահէին: Որ ի բարձուն ի խորս իջանէր, ըզխումն խորոց հեղձուցանէր: Ամ[են]այն⁽⁴⁾ որ ուր և թաքչէր, ջուրք ելանէին ընդ առաջ նորա: Եւ որ մտանէր թաքչէր ի սննեկի, գոչէր ծով ընդդէմ նորա: Պատահէին ջուրք ջուրց, հաստատութեան երկնի և անգնդոց: Ի միջոցի տանջեալ լինէր ազգն որ ամպարշտեցաւ յառաջագոյն: Յամենայն տեղեաց ընթացան ջուրք, զի յամենայն տեղիս ընթացան մեղք: Արձակեաց զծովս կապեալս, զի կցեն որսայցեմն զարձական: Երկիր որ ի սմա ամպարշտեցան, երա՛ց զաղբերս ի վերայ նորա: Երկիրք որ ի ներքոյ նորա ցատուցին, փլու՛յց զհոսանս ի վերայ նոցա: Վերացաւ մեծարեցաւ տա-

պանն, զի լուծեալ էր ի նմա զգոտաութիւն: Սկսան թողալ զինչս իւրեանց, և ընթանային թափել զկեանս իւրեանց: Արհամարհեցին և թողին գոտացուածս, զի ապրեցուցեմն զանձինս իւրեանց: Ի կորուստ ընկեցին զգանձս, զի սիրէ մարդ ի բարկութեան զա՛նձն իւր քան զըստացուածս: Արդ զի ոչ փախեան ուղղակի⁽¹⁾, սկսան փախել ձախողակի: Զի ոչ փախեան ի շինուածոց, կորեա՛ն շինուածքն և շինաւդքն: Զի ոչ կասեցին սակաւ մի ի վաստակոց, յաճախեա՛ց նոցա աշխատութիւն: Սկսան ընթանալ յամենայն բարձունս, զի ո՛չ ընթացան առ մի բարձրութիւն: Սկսան ընթանալ յամենայն տեղիս, զի ո՛չ ընթացան ի մի տեղի: Զի ոչ ընթացան առ խոնարհութիւն, ի բարձունդա՛կս բարձանց ընթացան: Հեղձան ի վերայ բարձունդակաց, զի ի բարձրութեան հեղձեալ էին: Ի լերինս բարձունս ապաւինեցան, զի ո՛չ ապաւինեցան ի մի ապաւենն: Զամենայն ծառոց կախեցան, փոխանակ զի զմիայն ոչ կախեցան: Եւ ի Սողոմ եկեն այսպէս: Իբրեւ մտին զըւարթութենքն կործանել զնա, Դովթ⁽²⁾ պատմէր զբարկութենէն, և փեսայք իւր հոգային ի գործ: Նա քարոզէր զկործանումն երկրին, և նոքա հոգային զտեղոց նորա: Նա երկրորդէր զաւեր երկրին, և նոքա երկրորդէին զլինութիւն տեղոյն: Երբեւ երկրորդեաց և երրորդեցին նմա: Եղև նա նոցա ի կատակա՛նս: Իբրեւ ըսկսան նոքա այսպանել, որոտմունք և ճայթմունք բարբառեցան: Իջին կայծակունք փոխանակ ցաւազոյ, և ճըճումբ⁽³⁾ փոխանակ լուցկոյ: Բորբոքեցաւ հուր ի հարսուսն, ի հարսունս և յառազոտս նոցա: Էր որ որոտմամբ հարեալ լինէր, և էր որ փայտատակմամբ այրեցեալ: Զայնիւ ճայթմամբ պայթեաց աւարոյն, լցաւ բերան իւր ի հողոյ: Որ եկեր զաւար աղբատաց, եկեր զնա հո՛ւր պահանջողին: Որ յափշտակութեամբն փափկանայր, ծով հըրեղէն⁽⁴⁾ հեղձոյց զնա: Տեսանէր ամենայն

(1) Տե՛ս վերադցն, ՍԻՄ, 1927, էջ 382 ծան.

(2) Այսպէս յօրինակին:

(3) Բառն ջրակածիլ չիմ բառգիրս:

(4) Երկնակին՝ ամայն դեպ:

(1) Երկնակին նախ գրեալ՝ ուղակի, զոր ուղղեւ արագութեամբ յաւելլով զ ի վերայ աղին:

(2) Այսպէս յօրինակին նոյնպէս և ի ներոյ:

(3) Երկնակին զի՛մ ճըճումբ:

(4) Երկնակին ունէ՛ր՝ երեղ, յոր յաղելու ուղղելն ի վերայ աղին՝ էն:

ազգին, ամենայն զամենայն զի այրէր: Զէր որ շիջուցանէր զհուր ընկերին, զի զիրո՞վ հրով էր ամենայն ոք: Ոչ զթա-
ցաւ մայր ի գուտար իւր, թէ շիջուցէ ի նմանէ զհուրն: Վասն զի ո՞չ որդմեցան
երկօքին քաղցելոց եւ կարատեղոց: Այ-
րէ՛ր որդի առաջի⁽¹⁾ ծնողի իւրոյ: Եղև
հաշուան նոցա ի հրապարակս, զի հաշեցին
զքաղցեալս ի հրապարակս: Սկսան յածել
եւ խնդրել ապաւինութիւն ի միւսում կող-
մանց: Դովթ էր ապաւինութիւն ի Սողոմ,
ի խել՝ զնա եկին Սողոմացիքն: Աս զնա
անտի ստուգութիւնն, զի մի՛ ապրեցին ի
պատճառս նորա: Զի զլացան զառաջին
փրկութիւն նորա, ի վերջին բարկութեա-
նքն կոտորեցան: Զի հայեցաւ ստուգու-
թիւնն ի նա՛ եւ ի նոսա ընտրողորաւ: Թէ
ընդ նոսա կորիցէ, չէ՛ աւրէն: Թէ ընդ
նմա կեցցեն, չէ՛ արժան: Զի ոչ ամպա-
րըտեցաւ ըն զնոսա, ո՛չ եթող կորնչել ընդ
նոսա: Եւ զի ոչ զարձան ի ձեռն նորա,
ո՛չ ետ նոցա թէ ընդ նմա կեցցեն: Զի ոչ
հաղորդեցաւ ընդ նոցա Դովթ, ո՛չ կցորդե-
ցաւ ի հարուածս նոցա: Զի աւտարացան
յարդարութենէ նորա, ո՛չ ապրեցան յա-
զաւթս նորա: Եւ մեք երկիցուք եղբարք,
զի զլացա՞ք զերկու փրկութիւնսն: Մի փրկ-
ութիւն զլացան նորա, երկս փրկութիւնս
զլացաք մեք: Եւ այժմ զի հեղաւ բարկու-
թիւն, հեղցուք զսիրտս մեր լալով, զի մի՛
պահանջեցէ վերջին բարկութիւնն զառա-
ջին փրկութիւնն զոր զլացաք: Կութք ի
պահս զիսկեցան, հունձք եւ բարկութիւն
ի միասին: Ընտրեցեք իրրեւ զընտրողս,
կշտամբեցէք իրրեւ ի կշիռս, թէ որո՞ւմ
ի կողմանցն արժան է զիւր, յաղթել ըն-
կերի իւրում: Ի ստացուածս⁽²⁾ ճեպեցուք,
թէ վասն անձանց աղաչեսցուք: Եթէ չիք
ի մեզ ընտրողութիւն, եկայք ստացո՞ւք
ի չարէն: Չար այն որ զրկէ զըհանձար,
նա՞ զնէ մեզ սիրտ եւ հանձար: Զամենայն
ինչ զոր ունի մարդ, ընդ անձին իւրոյ⁽³⁾
փոխանակէ տալ: Մեք ի ժամ բարկու-
թեան, զանձինս տամք փոխանակ ընչից
մերոց: Կորուսիչն անձանց, զիտէ թէ ա-

ռաւէ՛լ է անձն քան զամենայն: Մեք չեմք
զիտակ անձանց, թէ զիւրո՞ք եւ քանիտան
է: Լինի մեզ դարձեալ ուսուցիչ, մահ բա-
րեկամ սատանայի: Զի թէ եղիցի սուգ ի
տաւնի, ծածկէ՛ սուգն զտաւնն: Եւ թէպէտ
եւ տաւնն աղբիւր քաղցր է, եւ քաղցրու-
թիւնն արբուցանէ ամենայնի, դառնացեալ
է ի նմա սէր սղոյ վասն որոշման սիրելոյ
իւրոյ: Խափանի յամենայն զործոց եւ զա-
զարէ՛ յամենայն շինուածոց: Լուէ յամե-
նայն աւգտութեանց, եւ առնէ՛ զայն որ
չեն աւգտու: Մեզ յերկուց իրաց աւրէն է
խափանել եւ հոգալ զանձանց: Մի, վասն
նոցա որ կորեանն, եւ միւս ես վասն անձանց,
Վասն նոցա լացցուք սիրով, եւ վասն անձանց
խնդրեսցո՞ւք երկիւղիւ: Միովն երկուս
չահեսցուք, զաւգուտ անձանց եւ զեղբարց
մերոց: Եթէ մի մեռեալ խափանէ զա-
ւուրս, զամենայն զտուեն քաղաքին եղ-
բարց եւ անգամոց, խափանեցի՞ք թոյր
իւր ի բեկման նորա: Աշխարհս սուռն է Ա-
զամայ, աղէտ մե՛ծ է ի տան հաւր մերոյ:
Ուստերք եւ դստերք Ազամայ, լացցո՞ւք
վասն կարւոյն հասարակաց: Իմաստնա-
ցաք առաջնովքն, եւ ուսեալ՝ եղևաք միջ-
նովքս: Լուաք զառաջնոցն եւ զմիջնոցն,
տեսա՞ք եւ զվերջինն: Եթէ ժպրհեսցուք
իրրեւ զառաջինսն, յաճախեսցո՞ւք քան
զառաջինսն: Եւ եթէ ծուլեսցուք քան ըզ-
միջինսն, առաւէ՛լ տանջեսցուք քան ըզ-
միջինսն: Եւ եթէ ամպարչտեսցուք վերջ-
նովքս, եղիցուք առաջինք ի հարուածս: Եւ
եթէ հաճոյք լիցուք վերջնովքս, եղիցուք
առաջինք ի պարգևսն: Աւրհնալ է որ
ջնջեաց զառաջինսն, զի երկեցուցէ՞ նո-
քաւք զմիջինսն: Գոհութիւն այնմ որ հար
զմիջինսն, զի խրատեսցէ՞ նոքաւք զվերջին-
սն: Աւրհնալ է որ ջանացաւ ընդ առաջին-
սն, եւ աշխատեցաւ եւ ի միջինսն: Եւ ոչ
ձանձրացաւ եւ վերջնովքս, զի ժի՛ր է առ
աւգնել: Գոհութիւն այնմ որոյ զաւագան
իւր յաւգո՞ւտ կարճեաց զժպրհսն: Գոհու-
թիւն այնմ որոյ զու՞թ իւր, յաւգո՞ւտ ողոր-
մի զարձեղոց:

Ձեռն ներսիս Սրբազան արհայրապետ
Տառնի, եւ սուրբնորդ սուր յոսիսիս
Սիւնոյ, որդի Աշխի սեւաստապի սա-
ցաղ սուրբ մատենիս յիշեցիք ի Քրիստոս
հանդերձ գեղեցիկ եւ ծաղկեալ չորեակի
հարազատսն: Հերմի, Ապիւրսի, Շա-
հանյանի եւ Գրիգորի:— Եւ զիս զմե-
զուցեալ գրիս Յովնանեկա աշակերտ նորին:
Եւ Աստուծ մեզ յիշողաց⁽¹⁾ եւ յի-
շեցիցոց ողորմեցի:— Ամէն:—

(1) Եթեմական գրեալ է՝ առի, զոր ուղղէ սրբ-
ապոստոլն զմեզ ի վերայ չողին:
(2) Եթեմական նախ գրեալ՝ ստացուած, յոր յա-
ւելու ուղղիցն ս:
(3) Ի յաւանցս զմէ բուն իսկ գրիչն՝ աւմ, ուստի
ընթեանիլ՝ իւրում:

Հրապարակեաց
Յ. Յ. Մ.

(1) Այսպէս յօթնական: